

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016 թվականի մարտի 30-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2016 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի լուծարային շրջանը Հեռակա ուսուցման ֆակուլտետում:
2. Նախաավարտական, արտադրական և ուսումնական պրակտիկաների ընթացքը:
3. Ամփոփիչ ատեստավորման քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի լուծարային շրջանի մասին /զեկուցող Ն. Ա. Կուտուզյան/:

Նշվեց, որ 2016 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի 1-ին լուծարային շրջան կազմակերպվել է՝ ըստ հաստատված ժամանակացույցի: Ժամանակացույցը նախապես տեղադրվել է ԳՊՀ պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում, ինչպես նաև փակցվել հայտարարությունների տախտակում: Նշվեց նաև, որ ավարտական կուրսերում ուսումնական պլաններով սահմանված նախաավարտական, արտադրական և ուսումնական պրակտիկաների կազմակերպման նպատակով ԳՊՀ-ի կողմից տրամադրվել են բազմաթիվ գրություններ և տեղեկանքներ՝ համապատասխան ուսումնական հաստատություններում և իրավաբանական կազմակերպություններում ուսանողների պրակտիկան կազմակերպելու նպատակով: Ուսանողներին տրամադրվել է խորհրդատվություն պրակտիկայի օրագրերը լրացնելու ուղղությամբ՝ ըստ մասնագիտությունների:

Արտահայտվեցին – Ա. Ե. Համբարձումյանը, Ա. Ա. Ոսկանյանը

Նշվեց, որ դեկանատը ամփոփիչ ատեստավորման քննություններին նախապատրաստվելու նպատակով՝ ըստ հղված շրջաբերականի, համակարգված աշխատանքներ է իրականացրել արխիվում ավարտական կուրսերի ուսանողների անձնական գործերի ստուգման ուղղությամբ, նախապատրաստվել են ավարտական կուրսերի ուսանողների ազգանվան, անվան և հայրանվան եռալեզու ցանկերը, ինչպես նաև Ակադեմիական քաղաքականության վարչության հետ ստուգվում և պատրաստվում են դիպլոմների հավելվածները:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Ա. Ա. Ոսկանյան